

կությունում: Անչափահասների սոցիալական դերի իրավական կարգավորման հստակությունը և ներդաշնակությունը անհրաժեշտ է մանկության պաշտպանության համար պետական քաղաքականության ոլորտում պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների պատշաճ կազմակերպվածության ապահովման համար: Այն կարևոր է նաև միջազգային չափանիշներով պետության կողմից երեխայի շահերի պաշտպանության համար, իսկ արդյունքում՝ պետության կողմից գործառույթներ իրականացնելու համար:

## СОЦИАЛЬНО-ПРАВОВАЯ РОЛЬ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ В СОВРЕМЕННОМ ОБЩЕСТВЕ

*А. Г. Апроян*

В статье рассматриваются вопросы, связанные с актуальной проблемой определения и законодательного закрепления правового статуса несовершеннолетнего, охраны их прав и законных интересов.

Необходимо отметить, что отношение к детям, к их роли в обществе менялось в зависимости от эпохи, ее исторического, экономического, политического, культурного уровня развития. Как показывает практика, современное общество еще не в полной мере осознало роль и значение детей. От того, какое место мы отведем детскому сообществу, будет зависеть дальнейшее развитие государства и общества.

## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ԴԱՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՁԵՎԱՎՈՐՈՂ ՄԱՐՄԻՆ

**Ա. Ս. ՂԱՄԲԱՐՅԱՆ**

*Իրավագիտության դոկտոր, դոցենտ*

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին: ՀՀ Սահմանադրությամբ մարդուն հնարավորություն է տրված իր իրավունքները պաշտպանել միջազգային դատական ատյաններում, այդ թվում՝ Եվրոպական դատարանում: Հայաստանի Հանրապետությունը 26.04.2002թ. միացել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիային: Նշված Կոնվենցիայի հիման վրա ստեղծվել է մարդու իրավունքների պաշտպանության առանձնահատուկ կառուցակարգ: Սկզբնական շրջանում այն իր մեջ ներառում էր երեք մարմիններ, որոնք պատասխանատու էին անդամ-պետությունների կողմից ստանձնած պարտավորությունների կատարումը երաշխավորելու համար:

Դրանք էին՝ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն: 01.11.1998թ. Կոնվենցիային կից Թիվ 11 արձանագրությամբ առաջին երկու մարմիններին փոխարինեց մշտական հիմունքով գործող Եվրոպական դատարանը, որի դատավորների թիվը հավասար է անդամ-պետությունների թվին: Եվրոպական դատարանի կարգավիճակը, այդ մարմնի կազմակերպման և գործունեության հիմնական առանձնահատկությունները սահմանվում են Կոնվենցիայով, Թիվ 11-րդ և 14-րդ արձանագրություններով:

Սույն աշխատանքում կներկայացնենք Եվրոպական դատարանի դերակատարությունն ազգային իրավական համակարգում(1), Եվրոպական դատարանի ակտերի բնույթը (2) և դրանց հրապարակման հիմնախնդիրը (3), Եվրոպական դատարանի ակտերի ազդեցությունը ՀՀ բարձր դատարանների քաղաքականության վրա (4):

**Եվրոպական դատարանի դերակատարությունն ազգային իրավական համակարգում:** Եվրոպայի խորհրդի անդամ-պետությունների իրավական համակարգերում Եվրոպական դատարանի դերակատարությունը երկար ժամանակ ներկայացվել կամ ներկայացվում է խիստ սահմանափակ ձևով, ինչն առավելապես դրսևորվում էր հետևյալ երկու գնահատականներով.

1. Եվրոպական դատարանի ակտերին<sup>1</sup> inter partes բնույթ վերագրելով, այսինքն՝ այդ ակտերն իրավական հետևանքներ են առաջացնում միայն դիմող-պատասխանող պետություն հարաբերություններում,

2. Եվրոպական դատարանը չունի բավարար դերակատարություն ներպետական օրենսդրության՝ Կոնվենցիային ու Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին հակասությունները հաղթահարելու հարցում:

Կարծում ենք՝ պետությունների իրավական համակարգերի զարգացման, իրավունքի գերակայության ապահովման և մարդու իրավունքների պաշտպանության կառուցակարգերի կատարելագործման ոլորտում Եվրոպական դատարանի փաստացի դերակատարությունը հսկայական է: Լ. Հակոբյանն արդարացիորեն նշում է, որ Եվրոպական դատարանը «տուգանք սահմանող» անհատականացված արդարադատություն իրականացնող դատական մարմնից վեր է ածվում ընդհանրացված արդարադատություն իրականացնող յուրօրինակ «սահմանադրական դատարանի», որն իր որոշումներով կահմանի ընդհանուր և կարևոր իրավական սկզբունքներ:<sup>2</sup> Յու. Բերեստնկը նշում է, որ Եվրոպական դատարանի նախադեպային ակտերի ազդեցությունն իրավական համակարգերի վրա օրեցօր մեծանում է: Իր գործունեության հիսուն տարիների ընթացքում ստրասբուրգյան վերահսկողական կառուցակարգերի մասնակից պետությունները

<sup>1</sup> Եվրոպական դատարանի կողմից ընդունվում են տարաբնույթ ակտեր՝ վճիռներ, բողոքի ընդունելության վերաբերյալ որոշումներ: Սույն աշխատանքում կօգտագործվի «Եվրոպական դատարանի ակտեր» ընդհանրական հասկացությունը: ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածում նույնպես օգտագործվում է «Եվրոպական դատարանի դատական ակտ» հասկացությունը:

<sup>2</sup> **Հակոբյան Լ.** Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը որպես Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ազգային իրավունքի աղբյուր: Սեղմագիր իրավ. գիտ. թեկնածու. ատենախոսության, Եր., 2010, էջ 23:

Եվրոպական դատարանի ակտերի հիման վրա մոտ 300 անգամ ձեռնարկել են ընդհանուր բնույթի միջոցառումներ՝ փոփոխություններ կատարելով իրենց օրենսդրությունում:<sup>3</sup>

Հայաստանի հանրային կյանքում Եվրոպական դատարանի դիրքորոշումների իրական դերակատարությունը և արժեքային նշանակությունը գնահատելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայում Եվրոպական դատարանի դիրքորոշումների գործածության ծավալները: Այսպես, իրավաստեղծ քաղաքականության ոլորտում հեղինակի կատարած դիտարկումները ցույց են տալիս, որ ՀՀ-ում մարդու իրավունքների, դրանց սահմանափակման վերաբերյալ օրինագծերի հիմնավորումների և այդ նախագծերի վերաբերյալ շահագրգիռ կազմակերպությունների, գերատեսչությունների կողմից ներկայացված կարծիքների գերակշիռ մասի հիմքում դրվում են խնդրո առարկա հարցի վերաբերյալ Եվրոպական դատարանի մոտեցումները: Նման պրակտիկան պայմանավորված է նաև «Մարդու իրավունքների եվրոպական կոմիտեի ցիայում ամրագրված չափորոշիչներին՝ օրենքների նախագծերի, գործող օրենքների ու վարչարարական պրակտիկայի համապատասխանության ստուգման վերաբերյալ» Rec (2004) 5 հանձնարարականի (ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2004թ. մայիսի 12-ին, 114-րդ նստաշրջանում) պահանջներով, որտեղ սահմանվում է, որ պետությունները պետք է երաշխավորեն պատշաճ և արդյունավետ մեխանիզմների առկայությունը՝ օրենքների նախագծերի՝ Կոնվենցիային համապատասխանությունը դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո պարբերաբար ստուգելու համար:

Ասվածը վերաբերում է նաև դատական պրակտիկայում դատավորների, դատախազների և փաստաբանների կողմից Եվրոպական դատարանի ակտերի գործածությանը<sup>4</sup>:

ՀՀ քաղաքական իշխանությունների կողմից Եվրոպական դատարանի գործունեության արժևորման առավել ցայտուն ապացույցը՝ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի ուժով Եվրոպական դատարանի ակտերը համանման գործերով ՀՀ դատարանների համար պարտադիր լինելու հանգամանքի պաշտոնական ճանաչումն է: ՀՀ բարձր դատարանների ղեկավարների կողմից բազմիցս տրվել է ՀՀ իրավական կյանքում Եվրոպական դատարանի դիրքորոշումների իրական գնահատականը: Գ. Հարությունյանն այս կապակցությամբ նշում է, որ միջազգային համաձայնագրի համաձայն՝ միակ մարմինը, ով իրավունք ունի Կոնվենցիայի պաշտոնական մեկնաբանության, Եվրոպական դատարանն է: Հետևաբար, նշված Դատարանի իրավական դիրքորոշումները՝ ա) Եվրոպայի խորհրդի պետությունների համար հանդիսանում են սահմանադրա-

<sup>3</sup> *Берестнев Ю.* Меры общего характера влияния практики ЕС по правам человека на национальные правовые системы. Российская юстиция. 2001. № 12. С. 65.

<sup>4</sup> ՀՀ բարձր դատարանների կողմից Եվրոպական դատարանի որոշումների կիրառման հիմնախնդիրների մասին մանրամասն տես՝ **Խաչատրյան Գ.** Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի որոշումների կատարման կառուցակարգերը: Ատենախոսություն իրավ. գիտ. թեկնածու. Եր., 2009, էջեր 90-116, **Պետրոսյան Շ.** Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործունեության հիմնախնդիրները (տեսական և կիրառական վերլուծություն): Ատենախոսություն իրավ. գիտ. թեկնածու. Եր., 2007, 143 էջ:

կան իրավունքի աղբյուր, բ) ունեն նախադեպային իրավունքի բնույթ: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ ՀՀ սահմանադրական դատարանը հաճախ վկայակոչում է Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները<sup>5</sup>:

Դ. Ավետիսյանը նշում է, որ Եվրոպական դատարանի իրավաբանությունը ՀՀ-ում ունի ուղղակի կիրառություն, ինչն իր բնույթով եզակի իրավական կարգավորում է: Միևնույն ժամանակ, պրակտիկան ցույց է տալիս, որ Ստրասբուրգի դատարանի իրավական դիրքորոշումների անմիջական կիրառումը խնդրահարույց է մի շարք պատճառներով: Դրանց թվում են՝ Եվրոպական դատարանի լեզվական մատչելիությունը, նախադեպային ակտերի հետ աշխատելու հմտությունների պակասը: Այս պարագայում ՀՀ վճռաբեկ դատարանը de facto ստանձնել է Ստրասբուրգի դատարանի իրավական դիրքորոշումների տեղայնացման գործառույթ սեփական նախադեպերի միջոցով: ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպերը հիմնված են Ստրասբուրգի դատարանի իրավական դիրքորոշումների վրա և իրենցից ներկայացնում են Եվրոպական իրավական արժեքաբանության փոխադրություն ՀՀ ազգային իրավական համակարգ<sup>6</sup>: Ինչպես նկատում ենք, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահը փաստում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպերի հիմքում առավելապես ընկած են Եվրոպական դատարանի ակտերը:

Ազգային իրավական համակարգում Եվրոպական դատարանի հանրային դերակատարությունն առավել շոշափելի է հատկապես Եվրոպական դատարանի ուղենիշ ակտերի կատարման ժամանակ, քանի որ դրանցով հետապնդվում են հանրային-իրավական նպատակներ ու կոչված են կատարելագործելու մարդու իրավունքների պաշտպանության ներպետական իրավական համակարգը:

Հայաստանի Հանրապետության հանրային կյանքի առանձին ոլորտներում Եվրոպական դատարանի քաղաքականությունն առաջացրել է համակարգային փոփոխություններ, դրանով պայմանավորված վերանայվել են իրավաստեղծ և իրավակիրառ քաղաքականության ուղղությունները: Օրինակ՝ Եվրոպական դատարանի քաղաքականության ազդեցությամբ վերացվեց վարչական կալանքը, իրավակիրառ պրակտիկայում փաստացի վերանայվեց ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերով զրավը կիրառելու քրեադատավարական արգելքը, ամրապնդվեցին սեփականության իրավունքի պաշտպանության իրավական երաշխիքները, երթեր, ցույցեր, հանրահավաքներ անցկացնելու իրավունքի իրականացման օրենսդրական կառուցակարգերը և այլն:

Ավելին, Եվրոպական դատարանի կողմից ՀՀ օրենսդրական դաշտում համակարգային խնդիրներ բարձրացնելիս ՀՀ դատական իշխանության մարմինները, հաճախ չսպասելով օրենսդրական համապատասխան փոփոխություններին,

<sup>5</sup> *Арутюнян Г.* Доктринальные подходы Конституционного Суда РА к решениям Европейского суда. Имплементация решений Европейского Суда по правам человека в практике конституционных судов стран Европы: Сборник докладов. М.: Институт права и публичной политики. 2006. С. 89.

<sup>6</sup> *Ավետիսյան Դ.* ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքն անձի ազատության և անձեռնմխելիության հիմնարար իրավունքի երաշխավորման ոլորտում: «Օրենք և իրականություն», 2010, թիվ 9, էջ 1:

անմիջապես հիմք ընդունելով Եվրոպական դատարանի դիրքորոշումը, փոխել են իրենց քաղաքականությունը: Օրինակ՝ «Պայքար և հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանը 20.12.2007թ. վճռում նշել է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը չի քննարկել պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին դիմումատուի միջնորդությունը, որում դիմումատուն փաստարկներ էր ներկայացրել վճարելու իր անկարողության մասին: Այդ պատճառով ՀՀ վճռաբեկ դատարանը հստակ տեղեկացված չէր դիմումատու ընկերության ֆինանսական դրության մասին, ուստի արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում: Նշված գործով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին միջնորդությունը մերժելու հիմքում ընկած էր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, որն արգելում էր առևտրային կազմակերպություններին ազատել պետական տուրքից: ՀՀ քաղաքական իշխանությունները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նշված նորմը վերացրել են 07.04.2009 թվականին, սակայն ՀՀ վճռաբեկ դատարանը, մինչ նշված նորմի վերացումը, արդեն իսկ իր քաղաքականությունը համապատասխանեցրել էր Եվրոպական դատարանի դիրքորոշմանը:

Եվրոպական կոնվենցիայի և Եվրոպական դատարանի գործունեության հեղինակության և դրանց բարձր արժեքի մասին է վկայում նաև իրավաբանական կրթության և վերապատրաստման ոլորտում Եվրոպական դատարանի ակտերի ուսուցման պրակտիկան: Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեմ 12.05.2004թ. ընդունել է «Համալսարաններում և մասնագիտական ուսուցման շրջանակներում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի ուսումնասիրության մասին» Rec (2004)4 հանձնարարականը, որտեղ առաջարկվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների և մասնագիտական վերապատրաստման ուսումնական ծրագրերում ներառել Եվրոպական կոնվենցիայի և Եվրոպական դատարանի պրակտիկայի ուսուցման դասընթացներ: Ներկայումս ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետում դասավանդվում են «Եվրոպական դատարանի պրակտիկան», «Մարդու իրավունքների Եվրոպական դատական պաշտպանությունը», «Նախադեպը միջազգային իրավունքում» դասընթացները, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանում դասավանդվում է «Եվրոպական չափորոշիչները քրեական դատավարությունում» դասընթացը: Եվրոպական դատարանի ակտերի վերաբերյալ հատուկ դասընթացներ են կազմակերպվում նաև «Դատական դպրոց» և «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ներում:

Այսպիսով՝ ՀՀ հանրային կյանքում Եվրոպական դատարանի քաղաքականության կարևորության մասին է վկայում այն, որ ՀՀ օրենսդրական ակտերի մշակման և ընդունման հիմքում դրվում են նաև Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները: Իրավական քաղաքականության սուբյեկտները, ընդհանուր առմամբ, Կոնվենցիան կիրառում են՝ Եվրոպական դատարանի ձեւավորած նախադեպային իրավունքում դրան տրված մեկնաբանությամբ<sup>7</sup>:

<sup>7</sup> Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ պետություններն իրենց պարտավորությունն իրականացնելիս, օժտված են որոշակի հայեցողությամբ, ինչը նրանց թույլ է տալիս իր երկրի ազգային, կրոնական, իրավական առանձնահատկությունների հաշվառմամբ, գտնել

**Եվրոպական դատարանի ակտերի բնույթը:** Իրավագիտության մեջ Եվրոպական դատարանի ակտերի իրավաբանական բնույթի վերաբերյալ արտահայտվել են տարբեր մոտեցումներ, սակայն գիտական բանավեճերն ընթանում են հիմնականում հասկացությունների ճշգրտման, մասնավորապես՝ Եվրոպական դատարանի ակտերի վերաբերյալ «նախադեպ» տերմինն օգտագործելու թույլատրելիության հարցի շուրջ: Կարծում ենք՝ գործնական տեսանկյունից կարևոր նշանակություն ունի ներպետական, հատկապես, դատական մարմինների համար համանման գործերով Եվրոպական դատարանի ակտերի նորմատիվության (պարտադիրության) հարցը: Մինչև սույն հարցի վերաբերյալ միջազգային իրավական և ներպետական կարգավորմանն անդրադառնալը, նշենք, որ տեսության մեջ հեղինակների մի խումբը, մի կողմից՝ փորձում է հերքել ներպետական հարթությունում համանման գործերով Եվրոպական դատարանի ակտերի պարտադիր ուժը, մյուս կողմից՝ նշում է Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները հաշվի առնելու պետության պարտականության մասին: Այսպես, Ա. Վ. Տունանովը նշում է, որ Եվրոպական դատարանի գործունեության հետ կապված՝ «նախադեպային իրավունք» հասկացության օգտագործումը ճիշտ չէ, երբ Եվրոպական դատարանի ակտերը մեկնաբանվում են որպես ազգային դատարանների համար պարտադիր նախադեպեր: Այնուամենայնիվ, չունենալով մնան պարտադիր ուժ, Եվրոպական դատարանի դատական պրակտիկան ազդում է ազգային օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի վրա: Նման ազդեցությունը մեծ է հատկապես այն դեպքերում, երբ նման արդյունքի հասնում են ոչ թե ներգործության այնպիսի ձևերով, ինչպիսիք են՝ դրամական տուգանքները, Եվրոպայի խորհրդի մոնիտորինգը, այլ այն դեպքում, երբ Կոնվենցիայի մասնակից-պետությունը հետևողականորեն ձգտում է կատարել Կոնվենցիայով իր վրա դրված պարտականությունները<sup>8</sup>: Լ. Չակոբյանը նշում է, որ չնայած Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը ներպետական մակարդակում չունի պարտադիր իրավաբանական ուժ, այդուհանդերձ, ներպետական մարմինները պետք է կրեն իրենց գործառույթները կատարելիս այն հաշվի առնելու *պարտավորություն* (ընդգծումն՝ Ա. Ղ.)<sup>9</sup>: Կարծում ենք՝ նշված հեղինակների դիրքորոշումները հակասական են: Եթե պարտավորությունների կատարման ոլորտում առկա են այնպիսի խիստ իրավական ներգործության միջոցներ, ինչպիսին է դրամական տուգանքը, ապա դրանց կիրառմանը պետք է նախորդի պետու-

այնպիսի լուծումներ, որոնք համահունչ են մարդու իրավունքների պաշտպանության Եվրոպական չափորոշիչներին և որևէ կերպ չեն կարող դիտվել որպես նահանջ դրանցից: Մանրամասն տես *Լուկինա Հ. Н.* Правовые позиции Европейского Суда по правам человека относительно свободы усмотрения государств при осуществлении вмешательства в права и основные свободы. Автореф. дисс. ... канд. юрид. наук. М.: 2008. <http://law.edu.ru/book/book.asp?bookID=1302349> (25.07.2011).

<sup>8</sup> *Туманов В. А.* Конституционное правосудие в свете практики Европейского Суда по правам человека. Международный Альманах Конституционное правосудие в новом тысячелетии. 2002. <http://www.concourt.am/-armenian/almanakh/almanac2002/Contents-r.htm> (29.08.2011).

<sup>9</sup> *Չակոբյան Լ.* Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը որպես Եվրոպայի խորհրդի անդամ-պետությունների ազգային իրավունքի աղբյուր: Սեղմագիր իրավ. գիտ. թեկնած. ատենախոսության, Եր., 2010, էջ 6:

թյան համար իրավաբանական պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստը: Այլ կերպ ասած, ազգային մարմինների կողմից Եվրոպական դատարանի դիրքորոշումները չպահպանելը կարող է վերջին հաշվով իրավական սանկցիաներ կիրառելու հիմք հանդիսանալ միայն այն պարագայում, եթե պետությունը կրում է այդ դիրքորոշումները պահպանելու իրավաբանական պարտականություն: Հակառակ դեպքում կստացվի, որ պետությանը կարելի է ենթարկել իրավական պատասխանատվության իրավաբանական տեսանկյունից ոչ պարտադիր ակտերը չպահպանելու համար: Կարծում ենք՝ այս մոտեցումը կհակասի իրավաբանական պատասխանատվության էությանը և սկզբունքներին:

Ներպետական իրավական համակարգում Եվրոպական դատարանի ակտերի նորմատիվությունը չի կարող հերքվել հայեցողության ազատության դոկտրինայի և Եվրոպական դատարանի գործունեության հիմքում ընկած սուբսիդիարության սկզբունքի տեսանկյունից: Բանն այն է, որ յուրաքանչյուր հանրային մարմին իրավակիրառ գործունեության մեջ օժտված է հարաբերական հայեցողությամբ՝ կապված իրավաբանական փաստերի գնահատման, նորմերի ընտրության, մեկնաբանման հետ: Ասվածը վերաբերում է նաև ՀՀ դատարանների կողմից Եվրոպական դատարանի ակտերի կիրառմանը: Այս դեպքում ՀՀ դատարանները հայեցողություն ունեն գնահատելու գործերի փաստական հանգամանքների նմանությունը Եվրոպական դատարանի կողմից ներկայացված դիրքորոշման բովանդակությունը, տվյալ գործով դրա կիրառության հարցը: Ինչ վերաբերում է Եվրոպական դատարանի գործունեության հիմքում ընկած սուբսիդիարության սկզբունքին, ապա այն ունի առավելապես դատարանակազմական նշանակություն, որը ցույց է տալիս, որ Եվրոպական դատարանը ոչ թե ՀՀ դատարանների համար վերադաս դատական ատյան է, այլ մարդու իրավունքների դատական պաշտպանության լրացուցիչ երաշխիք:

Կոնկրետ գործը լուծելիս՝ Եվրոպական դատարանը հաճախ մեկնաբանում է Կոնվենցիայի դրույթները, և այդ մեկնաբանությունները Եվրոպական դատարանի ակտերին հաղորդում են նորմատիվային բնույթ: Ըստ էության, Եվրոպական դատարանն իրականացնում է Կոնվենցիայի դրույթների «պաշտոնական մեկնաբանություն», քանի որ այսօր Կոնվենցիայի դրույթները կիրառվում են այնպես, ինչպես մեկնաբանվում են Եվրոպական դատարանի կողմից: Եվրոպական դատարանն իր ակտերին հետևելու կարևորությանն անդրադարձել է Կոսին ընդդեմ Սիացյալ Թագավորության գործով, որում ասվում է, որ դա իրականացվում է Կոնվենցիայի համաձայն՝ իրավական որոշակիության և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի կանոնավոր զարգացման շահերից ելնելով: Եվրոպական դատարանի կարծիքով նմանատիպ գործերով տարբեր որոշումներ ընդունելը կարող է հանգեցնել օրենքի առջև քաղաքացիների անհավասարության, որի արդյունքում կարող են խախտվել արդարադատությունից պաշտպանություն ակնկալող անձանց օրինական շահերը և իրավունքները:

Եվրոպական դատարանը, քննարկման առարկա հանդիսացած գործի քննության ընթացքում կիրառելով և մեկնաբանելով Կոնվենցիան, ստեղծում է իրավական դիրքորոշումներ, որոնց նորմատիվ բնույթը ենթադրում է, որ դրանք տարածվում են ոչ միայն քննարկման առարկա հանդիսացած գործի նկատմամբ,

այլ նաև՝ բոլոր համանման գործերի նկատմամբ: Կոնվենցիայի և նրան կից արձանագրությունների նորմերի մեկնաբանման ժամանակ Եվրոպական դատարանը ստեղծում է նորմ, որը պարտադիր է Կոնվենցիան կիրառող սուբյեկտների համար: Եվրոպական դատարանի կոնկրետ գործով կայացված ակտերը պարունակում են հսկայական քանակի փաստական և պատճառաբանական բնույթի տեղեկատվություն: Եվրոպական դատարանի կողմից ստեղծված նորմերը և այնտեղ արտահայտված իրավական դիրքորոշումները հնարավորություն են տալիս ոչ միայն ճիշտ ընկալել Կոնվենցիայի և կից արձանագրությունների դրույթները, այլ նաև նպաստում են ՀՀ օրենսդրության մեջ առկա գնահատողական հասկացությունների պարզաբանմանը<sup>10</sup>:

Մինչև Կոնվենցիային կից թիվ 11 արձանագրության ուժի մեջ մտնելը (1998թ.) համանման գործերով Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների պարտադիրության հարցը որոշակիորեն կանոնակարգված էր: Այսպես, սկզբնական խմբագրությամբ Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր Բարձր Պայմանավորվող կողմ ցանկացած ժամանակ կարող է հայտարարություն անել այն մասին, որ նա ipso facto և առանց հատուկ համաձայնության ճանաչում է Դատարանի պարտադիր իրավասությունը սույն Կոնվենցիայի դրույթների մեկնաբանմանը և կիրառմանը վերաբերող հարցերի նկատմամբ»: Այս դրույթից բխում էր, որ համապատասխան հայտարարություն արած պետությունն այդ փաստի ուժով Եվրոպական դատարանի որոշումներում տրված Կոնվենցիայի մեկնաբանությունները կհամարեր իր համար պարտադիր և, հետևաբար, իր ազգային իրավունքի բաղկացուցիչ մաս<sup>11</sup>: Կոնվենցիայի 46-րդ հոդվածի ներկայիս խմբագրությունը նախատեսում է Եվրոպական դատարանի ակտերի պարտադիրություն միայն կողմերի համար: Սակայն այդ ակտերը և դրանց իրավական հետևանքները պետք է դիտարկվեն ոչ միայն Կոնվենցիայի 46-րդ հոդվածի, այլ նաև Կոնվենցիայի նպատակի, Եվրոպական դատարանի գործառույթների, ինչպես նաև Եվրոպական դատարանի ակտերի իրավաբանական բնույթի վրաբերյալ կոնկրետ պետության օրենսդրական կարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի լույսի ներքո:

ՀՀ դատական մարմինների համար Եվրոպական դատարանի ակտերի պարտադիրությունն օրենսդրորեն ամրագրվեց ՀՀ դատական օրենսգրքով (ընդունվել է 2007թ.): Մինչև այդ չկար օրենսդրական դրույթ, որն ուղղակիորեն կնախատեսեր համանման գործերով Եվրոպական դատարանի ակտերի պարտադիրությունը, սակայն ՀՀ դատական մարմինները հաճախ կիրառել են Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները: Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանի 18.04.2003թ. որոշման մեջ պալատը հղում է կատարել Թրգասկան ընդդեմ Լեհաստանի գործով կայացված վճռի վրա, դրանով փորձել Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով մեկնաբանել «անհապաղ տարվել»

<sup>10</sup> *Волосюк П. В.* Значение решений Европейского суда по правам человека в уголовном праве России. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Ростов-на-Дону, 2007. С. 17.

<sup>11</sup> *Մելիքյան Ռ.* ՀՀ քրեական արդարադատության կանոնակարգման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների ազդեցության որոշ հարցեր: Դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր: Գիտ. հոդվ. ժողովածու. «Տիգրան Մեծ», 2005, էջ 115:

բառերի իմաստը: ՀՀ վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով «քրեական մեղադրանք» հասկացության՝ Եվրոպական դատարանի մեկնաբանությունը 2005թ. Վ. Խալացորցյանի գործով, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված մի շարք երաշխիքներ կիրառելի է համարել վարչական կալանք նախատեսող խախտումների փաստով հարուցված վարույթի նկատմամբ: Կարծում ենք՝ ՀՀ բարձր դատարանների կողմից այլ պետությունների մասնակցությամբ կայացված Եվրոպական դատարանի ակտերի կիրառումը կարելի է դիտել դրանց պարտադիրության փաստացի ճանաչում:

ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ: Ա. Մկրտումյանը նշում է, որ դատարանի պարտականությունը՝ հաշվի առնել Եվրոպական դատարանի կողմից տրված Եվրոպական կոնվենցիայի նորմերի մեկնաբանությունները, որպես կանոն, բացառում է դատարանի կողմից անսպասելի որոշումների կայացումը: Այս կանոնը հնարավորություն կտա դատավարության կողմերին գնահատել ռիսկի աստիճանը և, որոշ իմաստով, կանխել հնարավոր անբարենպաստ հետևանքները<sup>12</sup>: Իսկ Դ. Ավետիսյանը գտնում է, որ ՀՀ գործող օրենսդրությունը հնարավորություն է տալիս, որ երկրի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների և ներքին օրենսդրության միջև հակասություններ հայտնաբերելու դեպքում օրենքը կիրառողները միանգամից հենվեն միջազգային համապատասխան փաստաթղթերի վրա: Այդ հնարավորությունից երկրի դատարաններն օգտվում են, և քիչ չեն դեպքերը, երբ Եվրոպական կոնվենցիան կամ Եվրոպական դատարանի ակտն անմիջականորեն կիրառվում են, որը հետագայում հիմք է հանդիսանում նաև համապատասխան օրենսդրական փոփոխությունների համար<sup>13</sup>:

ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի պայմաններում իրավակիրառ պրակտիկայում ծագում է ՀՀ դատարանների կողմից Եվրոպական դատարանի դատական ակտերի հիմնավորումների կիրառելիության, մասնավորապես՝ գործերի փաստական հանգամանքների մնանության գնահատման չափորոշիչների հարցը, որի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը 23.06.2008թ. որոշմամբ նշել է.

«ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի) հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտը ոչ կիրառելի ճանաչելիս դատարանները չեն կարող բավարարվել կիրառման ենթակա և քննության

<sup>12</sup> *Мкртумян А.* Судебный прецедент в гражданском праве России и Армении. Автореф. дисс. ... д-ра. юрид. наук. М.: 2011. С. 28-31.

<sup>13</sup> *Ավետիսյան Դ.* Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մի քանի հիմնահարցերի շուրջ: «Օրենք և իրականություն», 2007, թիվ 6, էջ 2:

առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունների պարզ համադրմամբ: Յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքների համակցությամբ եզակի է, ուստի դատարանը պետք է յուրաքանչյուր դեպքում պարզի, թե կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունները որքանով են էական: Հակառակ պարագայում ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում) ամրագրված իրավանորմը կդառնա անկիրառելի: Դրա հետ մեկտեղ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն, թե տվյալ դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող ինչպիսի դրույթ է ենթակա կիրառման: Եթե այդ դրույթն իր բնույթով առավել ընդհանրական է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Եվ ընդհակառակը՝ եթե դրույթն իր բնույթով առավել կոնկրետ է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել մեծ ընդհանրություն»:

Եվրոպական դատարանի ակտերի հաջորդ հատկանիշը դրանց հարաբերական կայունությունը և փոփոխման հնարավորությունն է: Եվրոպական դատարանի ակտերի կայունությունն ունի հատուկ նշանակություն, քանի որ, ի տարբերություն ՀՀ բարձր դատարանների, Եվրոպական դատարանի քաղաքականությունն ունի վերապետական բնույթ, տարածվում է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների վրա, որոնք պարտավորված են իրենց իրավական համակարգերը համապատասխանեցնել նաև Եվրոպական դատարանի քաղաքականության շրջանակներում մշակած չափորոշիչներին: Այդ չափորոշիչների մշտական փոփոխությունը կամ դրանց երկակի չափանիշներով կիրառելն ուղղակիորեն նպաստում է տարաբնույթ ազգային իրավական համակարգերի փոփոխությանը, իսկ որոշ դեպքերում նաև՝ անկայունությանը:

Միևնույն ժամանակ միջազգային իրավական նորմերով նախատեսված է Եվրոպական դատարանի քաղաքականության փոփոխության հնարավորություն, որոնք իրականացվում են գործը լուծող Պալատի իրավասությունը Մեծ պալատին զիջելու և Պալատի վճիռը Մեծ պալատ բողոքարկելու շրջանակներում: Այսպես, Կոնվենցիայիով և դրանց վերահսկողության համակարգը փոփոխող և լրացնող Թիվ 14 արձանագրության համաձայն՝ իրեն ներկայացված գործերը քննելու համար Դատարանը նիստեր է գումարում միանձնյա դատավորի կազմում, երեք դատավորներից կազմված կոմիտեներում, յոթ դատավորներից կազմված Պալատներում և տասնյոթ դատավորներից կազմված Մեծ պալատում: Այն բոլոր դեպքերում, երբ Պալատի քննության ներքո գտնվող գործը հանգեցնում է *Կոնվենցիայի դրույթների մեկնաբանմանն առնչվող որևէ լուրջ հարցի, կամ եթե պալատի քննության ներքո գտնվող հարցի լուծումը կարող է հակասել Դատարանի ավելի վաղ կայացրած որոշմանը*, ապա Պալատը կարող է ցանկացած ժամանակ ընդդատությունը զիջել Մեծ պալատին, իհարկե պայմանով, որ կողմերից ոչ մեկը չի առարկում դրա դեմ (ընդգծումն՝ Ա. Ղ.): Մեծ պալատին իրավասությունը զիջելու հիմքերից է. պալատի քննության ներքո գտնվող հարցի լուծումը կարող է հակասել Դատարանի ավելի վաղ կայացրած որոշմանը: Նշված հիմքը փաստացի վերաբերում է որևէ իրավական հարցի վերաբերյալ Եվրո-

պական դատարանի քաղաքականության փոփոխությանը: Այլ կերպ ասած, եթե նախկինում Կոնվենցիայի որևէ դրույթ ընկալվել է մի կերպ, սակայն հետագայում անհրաժեշտություն է առաջանում վերանայել նման ընկալումը, ապա այս դեպքում Պալատը կարող է ընդդատությունը զիջել Մեծ պալատին:

Կոնվենցիայի որոշակի դրույթներ կարգավորում են նաև Պալատի որոշումները Մեծ պալատ բողոքարկելու դատավարական ընթացակարգը: Այսպես, Պալատի՝ վճիռ կայացնելու օրվանից հետո երեք ամսվա ընթացքում գործի ցանկացած կողմ բացառիկ դեպքերում կարող է պահանջել, որ գործը հանձնվի Մեծ պալատին: Մեծ պալատի հինգ դատավորից բաղկացած հանձնախումբն ընդունում է պահանջը, եթե գործն արժարժուն է այնպիսի լուրջ հարց, որը *վերաբերում է Կոնվենցիայի մեկնաբանմանը կամ կիրառմանը, կամ՝ ընդհանուր կարևորության այլ լուրջ հարց* (ընդգծումն՝ Ա. Ղ.): Մեծ պալատը գործի քննության արդյունքներով կայացնում է վճիռ, և, ի տարբերություն Պալատի վճռի, որը վերջնական է դառնում, երբ կողմերը հայտարարում են, որ չեն պահանջի գործի հանձնում Մեծ պալատին, վճռի կայացումից հետո երեք ամսվա ընթացքում չի պահանջվում գործի հանձնում Մեծ պալատին կամ Մեծ պալատի հանձնախումբը մերժում է գործը հանձնելու պահանջը, Մեծ պալատի վճիռը վերջնական է և ենթակա է հրապարակման:

Եվրոպական դատարանի ակտերի հատկանիշներից է դրանց գիտատեսական բնույթը: Եվրոպական դատարանի ակտերի գիտատեսական բնույթը նույնպես պայմանավորված է Եվրոպական դատարանի դատավորների կազմում իրավաբան-գիտնականների ընդգրկման փաստով: Եվրոպական կոնվենցիայի համաձայն՝ Եվրոպական դատարանի դատավորները պետք է համապատասխանեն որոշակի պահանջների: Մասնավորապես, դատավորները պետք է ունենան բարոյական բարձր նկարագիր և բավարարեն դատական բարձր պաշտոններում նշանակվելիս ներկայացվող պահանջները կամ լինեն ճանաչված իրազեկ իրավագետներ: Կոնվենցիայում չի խոսվում դատավորների՝ հենց գիտնական լինելու, որևէ գիտական աստիճան ունենալու կամ գիտական գործունեությամբ զբաղվելու մասին, սակայն, ըստ էության, ճանաչված իրազեկ իրավագետ եզրույթների ներքո կարելի է հասկանալ իրավագիտության ոլորտում բարձր հեղինակություն ունեցող գիտնականների: Պատահական չէ, որ Եվրոպական դատարանի դատավորների կազմում ընդգրկված են մեծ թվով իրավաբան գիտնականներ և դասավանդողներ: Այսպես, Եվրոպական դատարանի 47 դատավորներից 28-ն ունի իրավագիտության ոլորտում գիտական աստիճան (PHD կամ doctor of law), իսկ նրանցից 6-ը զբաղվում է նաև մանկավարժական գործունեությամբ<sup>14</sup>:

**Եվրոպական դատարանի ակտերի հրապարակման խնդիրը:** Եվրոպական դատարանի որոշումների պաշտոնական լեզուներն են անգլերենը և ֆրանսերենը: Եվրոպական դատարանի Կանոնակարգի 76-րդ Կանոնի համաձայն՝ բոլոր ակտերը կայացվում են անգլերեն կամ ֆրանսերեն, բացի այն դեպքերից, երբ Դատարանը որոշում է, որ վճիռը կայացվում է երկու պաշտոնական լեզուներով: Դատարանի վերջնական վճիռները, Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 3-րդ կետի համապատասխան, հրատարակվում են Քարտուղարի պատասխանատու-

<sup>14</sup> Տվյալները վերցվել են Եվրոպական դատարանի պաշտոնական կայքում տեղադրված դատավորների կենսագրություններից (12.05.2011թ. դրությամբ):

թյամբ՝ համապատասխան ձևով: Եվրոպական դատարանի ակտերի պաշտոնական հրապարակումը Եվրոպական դատարանի ակտերի կատարման ընդհանուր միջոցառումներից է: Դատավորները ՄԻԵԿ-ի պահանջները կարող են արդյունավետ կերպով կիրառել և կատարել, եթե բավարար չափով տիրապետում են Եվրոպական դատարանի բարդ պրակտիկային: Հաշվի առնելով ասվածի կարևորությունը՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների Կոմիտեն 2002թ. դեկտեմբերի 18-ին ընդունել է «Անդամ պետություններում Սարդու իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի և Սարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հրապարակման և տարածման» մասին Rec (2002) 13 հանձնարարականը, որտեղ նշվում է. «Դատարանի նախադեպային իրավունքի մատչելիությունը բացառիկ կարևորություն ունի ներպետական մակարդակում Կոնվենցիայի իմպլեմենտացիայի արդյունավետության համար, քանի որ այն հնարավորություն է տալիս ապահովելու ներպետական որոշումների համատեղելիությունը նախադեպային իրավունքի հետ և կանխել խախտումները»:

Արդյոք Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է հայերեն թարգմանել և պաշտոնապես հրապարակել Եվրոպական դատարանի վճիռները: Այս հարցը քննարկելու համար պետք է տարբերակել Հայաստանի և այլ պետության մասնակցությամբ ակտերի հրապարակումը:

Հայաստանի մասնակցությամբ Եվրոպական դատարանի ակտերի գերակշռող մասը թարգմանվել և պաշտոնապես հրապարակվել է, սակայն այս կապակցությամբ առկա է երկու խնդիր:

1. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում կամ այլ օրենսդրական ակտերում բացակայում է Հայաստանի մասնակցությամբ Եվրոպական դատարանի ակտերը ՀՀ պաշտոնական տեղեկագրում պարտադիր հրապարակելու վերաբերյալ որևէ նորմ: Հայաստանի մասնակցությամբ ակտերի հրապարակումն իրականացվում է Եվրոպական դատարանի ակտերի կատարման ընդհանուր միջոցառումների կառուցակարգերի շրջանակներում:

2. Եվրոպական դատարանի ակտերի կայացման պահից անցնում է երկար ժամանակ, մինչև այն թարգմանվում և հրապարակվում է պաշտոնական տեղեկագրում: Նախկինում մեր կողմից նշվել է, որ Եվրոպական դատարանի ակտերի թարգմանության և հրապարակման ժամանակային հրատապության հանգամանքը պայմանավորված է այն փաստով, որ Եվրոպական դատարանի ակտերը դատավարական օրենսդրությամբ դիտվում են որպես վարույթը նորոգելու հիմք: Նման հիմքով վարույթի նորոգումն ունի ժամանակային սահմանափակումներ: Այսպես, ՀՀ դատական օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասը (նախկին խմբագրությամբ) սահմանում էր, որ նոր հանգամանքներով կամ նոր երևան եկած հանգամանքներով գործը վերանայելու համար դիմում կարող է բերվել 3 ամսվա ընթացքում այն պահից, երբ դիմում բերող անձն իմացել կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին<sup>15</sup>: Որպեսզի Եվրոպական դատարանի

<sup>15</sup> ՀՀ քաղ. դատ. օր-ի 204.34-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք կարող է բերվել 3 ամսվա ընթացքում այն պահից, երբ բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին: Այս դեպքում եռամսյա ժամկետի հաշվարկն սկսվում է Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը

խախտման զոհը որոշի, թե արդյոք Եվրոպական դատարանի վճռի կատարումը և իր խախտված իրավունքների վերականգնումը ենթադրում է ներպետական դատական ակտի վերանայում, թե ոչ, պետք է Եվրոպական դատարանի վճիռը հրապարակելու պահից 3 ամսվա ընթացքում ժանոթանա դրա բովանդակությամբ<sup>16</sup>: Մինչդեռ Եվրոպական դատարանի ակտերի կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող Նախարարների կոմիտեն Հայաստանի կապակցությամբ բազմաթիվ անգամ նշել է Եվրոպական դատարանի ակտն ուժի մեջ մտնելու և Հայաստանի կողմից ակտը հրապարակելու ամսաթվերի միջև առկա ժամանակային էական տարբերության մասին<sup>17</sup>:

Այլ պետության մասնակցությամբ Եվրոպական դատարանի ակտերի հրապարակման կապակցությամբ նշենք, որ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը պարտավորեցնում է համանման գործերով ՀՀ դատարաններին կիրառել ոչ միայն Հայաստանի, այլև այլ պետության մասնակցությամբ կայացված Եվրոպական դատարանի յուրաքանչյուր ակտ: Ինչպես նշվեց, ՀՀ բարձր դատարանների քաղաքականությունը հաճախ հիմնված է ոչ միայն ՀՀ մասնակցությամբ Եվրոպական դատարանի ակտերի վրա, այլև առավել հաճախ կիրառում են այլ պետությունների մասնակցությամբ կայացած ակտերը, որոնք պաշտոնապես չեն թարգմանվում և հրապարակվում<sup>18</sup>: Այլ պետության մասնակցու-

կան որոշումն այդ դատարանի կանոնակարգերով սահմանած կարգով այդ դատարան դիմած անձին հանձնելու օրվանից:

<sup>16</sup> **Ղանբարյան Ա.** Եվրոպական դատարանի որոշումների մատչելիությունը քրեական արդարադատության համակարգում: «Օրինականություն», 2008, թիվ 45, էջեր 23-26:

<sup>17</sup> Սկրտչյանն ընդդեմ Հայաստանի գործով ակտը կայացվել է 11.01.2007թ.-ին, ուժի մեջ է մտել 11.04.2007թ.-ին, իսկ պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է 12.09.07թ-ի թիվ 46(570) պաշտոնական տեղեկագրում: Ստացվում է այս վճիռը հրապարակվել է, ուժի մեջ մտնելուց պահից, մոտ վեց ամիս անց: Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի ուժի մեջ մտնելու և հրապարակելու ժամանակային տարբերությունը կազմում է տեսնմել ամիս, «Պայքար և հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով՝ ութ ամիս, մինչդեռ դիմողները ունեցել են երեք ամիս՝ վճիռը ուժի մեջ մտնելուց հետո նոր հանգամանքների հիմքով զանգատներ կայացնելու համար: Տես **Ղազարյան Ա., Ջեյնալյան Ա., Գրիգորյան Ա.** Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռների կատարման գործընթացը. Հայաստանում դրանց կատարման հիմնախնդիրները: Եր., «Ասողիկ», 2011, էջեր 64, 70:

<sup>18</sup> Սակայն այդ բացը ինչ-որ չափով լրացվում է ոչ պետական կազմակերպությունների կողմից: Այսպես, հրապարակվել են Եվրոպական դատարանի որոշումների հետևյալ ժողովածուները՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ընտրանի: **Վ. Հովհաննիսյան, Լ. Հակոբյան, Լ. Հակոբյան.** Եր., «Տիգրան Մեծ», 2002, Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ժողովածու: Գիրք երկրորդ, խմբ. Ա. Գյուլումյան, Լ. Հակոբյան. Եր., 2002, Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ժողովածու: խմբ. Լ. Հակոբյան. Եր., «Նոյան Տապան», 2003, Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ժողովածու. խմբ. Լ. Հակոբյան. (Գիրք երրորդ). Եր., «Անտարես», 2004, Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ժողովածու. խմբ. Լ. Հակոբյան. (Գիրք չորրորդ). Եր., «Անտարես», 2006, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ժողովածու. խմբ. Լ. Մելիքյան. (Գիրք հինգերորդ). Եր., «Անտարես», 2008, Մարդու իրավունքների եվրոպական դատարան. Վճիռների ժողովածու. Մասնագիտական խմբագիր՝ Դավիթ Ավետիսյան, ընդհանուր խմբագիր՝ Վահե Ենգիբարյան. (Գիրք վեցերորդ). Եր., «Անտարես», 2008, Մարդու իրավունքների եվրոպական դատարան. Վճիռների ժողովածու. խմբ. Դ. Ավետիսյան, Վ. Ենգիբարյան. Գիրք յոթերորդ. Եր., «Անտարես», 2010, Մարդու իրավունքները և քրեական

թյամբ ակտերի պաշտոնական թարգմանության և հրապարակման բացակայությունը կարող է պարարտ հող ստեղծել Եվրոպական դատարանի քաղաքականության բովանդակությունն ազգային դատավորների կողմից ոչ ճիշտ ընկալելու, սխալ կիրառելու համար:

Միևնույն ժամանակ, գիտակցում ենք, որ այլ պետությունների մասնակցությամբ կայացվում են մեծ թվով ակտեր, որոնց թարգմանության և հրապարակման բեռը և ֆինանսական, և աշխատատարության տեսանկյունից ծանր է: Ներկայումս իրատեսական չէ այլ պետությունների մասնակցությամբ կայացված Եվրոպական դատարանի բոլոր ակտերի պաշտոնական թարգմանությունը և հրապարակումը: Այդ նպատակով առաջարկում ենք Եվրոպական դատարանի ակտերի հրապարակման պարտականության կատարման երկու փուլ: Առաջին փուլում Եվրոպական դատարանի Մեծ պալատի կողմից կայացվող ակտերի, իսկ երկրորդ փուլում՝ Եվրոպական դատարանի նախադեպային արժեք ունեցող ակտերի հրապարակում: Ի դեպ, նշենք, որ Եվրոպական դատարանի Մեծ պալատի կողմից կայացվող որոշումների հրապարակման անհրաժեշտությունը պայմանավորված է երկու հանգամանքով: 1. Մեծ պալատի կողմից կայացվող որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներով ապահովվում է Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի զարգացումը: 2. Մեծ պալատի կողմից քննվող գործերը տարեկան կտրվածքով մեծ թիվ չեն կազմում<sup>19</sup>:

**Եվրոպական դատարանի ակտերի ազդեցությունը ՀՀ բարձր դատարանների քաղաքականության վրա:** ՀՀ բարձր դատարանների վրա Եվրոպական դատարանի ակտերի ազդեցությունը պարզելու համար հիմնարար նշանակություն ունի այն հարցադրումը, թե Եվրոպական դատարանի ակտերը ինչպիսի իրավական հետևանքներ են առաջացնում ՀՀ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների համար: Ինչպես նշվեց, ՀՀ բարձր դատարաններն իրենց վերագրում են Եվրոպական դատարանի ձևավորած քաղաքականությունը ՀՀ իրավական համակարգ ներմուծելու կարևոր գործառույթը, ինչը դրսևորվում է նախևառաջ նրանում, որ ՀՀ բարձր դատարանները իրենց որոշումներում հաճախ վկայակոչում և վերլուծում են Եվրոպական դատարանի ակտերը:

ՀՀ բարձր դատարանների վրա Եվրոպական դատարանի քաղաքականության ազդեցության հարցը գտնվում է առավելապես Եվրոպական դատարանի որոշումների կատարման պարտավորության տիրույթում: «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների կատարման մասին» 1226 (2000) բանաձևում նշվում է, որ Կոնվենցիան ամրագրում է մարդու իրավունքների պաշտպանության բացառիկ մեխանիզմները և աջակցում է ժողովրդավարական անվտանգության պահպանմանը և իրավունքի գերակայության սկզբունքի իրա-

դատավարությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան. Եր., *Ջերեմի Սաքքրայդ*, թարգմ.՝ Վահե Ենգիբարյան. «Անտարես», 2009, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա: Գործեր և նյութեր: / *Էլիսբեր Սոուրբեյ*, իրավ. գիտ. բակալավր (Ուորլիկ), իրավաբանական գիտ. դոկտոր (Էդինբուրգ). Եր., Բավիլ, 2010:

<sup>19</sup> Եվրոպական դատարանի Մեծ պալատը 2000թ. կայացրել է 26 որոշում, վճիռ և խորհրդատվական եզրակացություն, 2001թ.-ին՝ 21 ակտ, 2002 և 2003թթ.-ին՝ 12-ական ակտեր, 2004թ.-ին՝ 16 ակտ, 2005թ.-ին՝ 14 ակտ, 2006թ.-ին՝ 27 ակտ, 2007թ.-ին՝ 15 ակտ, 2008թ.-ին՝ 18 ակտ, 2009թ.-ին՝ 45 ակտ:

կանացմանը ողջ եվրոպական մայրցամաքի վրա: Այս սկզբունքը պահպանելու համար կարևոր է, որ պետությունները լիարժեք իրականացնեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերջնական որոշումները կատարելու իրենց պարտավորությունները: Եվրոպական դատարանի ակտերի կատարման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի ինստիտուտների կողմից ընդունվել են մի շարք բանաձևեր և հանձնարարականներ<sup>20</sup>:

Եվրոպական դատարանի ակտերի կատարման անհատական միջոցառումներից է Եվրոպական դատարանի ակտի հիման վրա դատական վարույթների նորոգումը և դատական ակտերի վերանայումը: Նախարարների կոմիտեն ընդունել է «Եվրոպական դատարանի որոշումների կապակցությամբ գործերի վերանայումը և վարույթի նորոգումը ներպետական մակարդակում» Դ R (2000) 2 հանձնարարականը, որտեղ նշվում է, որ Նախարարների կոմիտեի՝ Դատարանի որոշումների կատարման նկատմամբ հսկողության իրականացման պրակտիկան ցույց է տալիս, որ որոշակի հանգամանքներում գործի վերանայումը կամ վարույթի նորոգումը հանդիսանում է *restitutio in integrum* հասնելու առավել արդյունավետ, եթե ոչ միակ, միջոցը: Եվրոպական կոնվենցիան չի պարտավորեցնում պետությանը ներպետական իրավունքում նախատեսել գործերի վերանայման կամ վարույթի նորոգման հնարավորություն, սակայն մասնակից պետությունների մեծ մասն ընդունում է օրենքներ, որոնք կարգավորում են գործերի վերանայման կամ վարույթի նորոգման հնարավորությունը: Հանձնարարականում կոչ է արվում պետություններին համոզվել, թե արդյոք ազգային իրավական համակարգերում առկա են անհրաժեշտ կառուցակարգեր՝ ապահովելու մինչև իրավունքի խախտումը եղած դրության վերականգնումը, հատկապես՝ վարույթի նորոգման կամ գործի վերանայման հնարավորությունը:

ՀՀ բարձր դատարանների վրա Եվրոպական դատարանի քաղաքականության ազդեցության հիմնական իրավական խողովակը Եվրոպական դատարանի ակտերի հիման վրա վարույթների նորոգումն է և դատական ակտերի վերանայումը: Սակայն անհրաժեշտ է քննարկել, թե Եվրոպական դատարանի ակտերն արդյո՞ք հանդիսանում են կամ պետք է հանդիսանան ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ արդարադատության խորհրդի որոշումների վերանայման հիմք:

Սահմանադրական դատավարության շրջանակներում Եվրոպական դատարանի ակտերի կատարման կառուցակարգերը պետք է վերլուծել երեք տարբեր իրավիճակների համար.

1. ՀՀ սահմանադրական դատարանի կողմից դատավարական խախտումների մասին Եվրոպական դատարանի ակտի կատարում: Եվրոպական դատարան-

<sup>20</sup> Recommendation CM/Rec (2008)2 of the Committee of Ministers to member states on efficient domestic capacity for rapid execution of judgments of the European Court of Human Rights (Adopted by the Committee of Ministers on 6 February 2008 at the 1017th meeting of the Ministers' Deputies), Resolution 1226 (2000) Execution of judgments of the European Court of Human Rights (Extract from the OFFICE database of the Council of Europe September 2000), Resolution 1268 (2002) Implementation of decisions of the European Court of Human Rights. *Assembly debate* on 22 January 2002 (3rd Sitting) (see [Doc.9307](#), report of the Committee on Legal Affairs and Human Rights, rapporteur: Mr Jurgens). Resolution 1516 (2006) Implementation of judgments of the European Court of Human Rights. *Assembly debate* on 2 October 2006 (24th Sitting) (see [Doc.11020](#), report of the Committee on Legal Affairs and Human Rights, rapporteur: Mr Jurgens).

նի ներկայիս պրակտիկայի համաձայն՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները կիրառելի են նաև սահմանադրական դատավարության շրջանակներում: Այս առումով գործնականում հանդիպում են դեպքեր, երբ Եվրոպական դատարանը վճռում է, որ սահմանադրական դատարանի կողմից այս կամ այն գործի քննության ընթացքում խախտվել են ողջամիտ ժամկետի, հրապարակայնության կամ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված այլ երաշխիքներ: Եվրոպական դատարանի նման ակտի կատարումը չի ենթադրում ԶԶ սահմանադրական դատարանի նախկինում քննված գործի վերանայում: Այս դեպքում Եվրոպական դատարանի ակտը կկատարվի արդարացի փոփոխություններով տրամադրամբ: Սակայն, ԶԶ սահմանադրական դատարանը հետագայում պետք է վերանայի իր դատավարական քաղաքականությունը՝ նման խախտումները վերացնելու համար<sup>21</sup>:

2. ԶԶ սահմանադրական դատարանի կողմից ԶԶ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչված նորմատիվ իրավական ակտը, կոնկրետ գործով ոչ իրավական ճանաչելու մասին Եվրոպական դատարանի ակտի կատարում: Զնարավոր է իրավիճակ, որ ԶԶ սահմանադրական դատարանը որոշի, որ այս կամ այն գործով կիրառված նորմատիվ իրավական ակտը համապատասխանում է ԶԶ Սահմանադրությանը, այնուհետև Եվրոպական դատարանը կոնկրետ գանձատի շրջանակներում որոշի, որ ներպետական դատարանների կողմից կիրառված նորմատիվ իրավական ակտը խախտել է Եվրոպական Կոնվենցիայով երաշխավորված իրավունքը: Այս դեպքում հարց է ծագում, թե արդյոք Եվրոպական դատարանի ակտի կատարումը ենթադրո՞ւմ է, որ պետք է վերանայվի ԶԶ սահմանադրական դատարանի կայացրած որոշումը: Նախ նշենք, որ ԶԶ սահմանադրական դատարանը 25.02.2011թ. ՍԴՈ-943 որոշման 8-րդ կետում հստակ սահմանել է, որ ԶԶ սահմանադրական դատարանի որոշումները վիճարկման ենթակա չեն ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային որևէ դատարանում: Բացի այդ, ԶԶ օրենսդրությամբ բացակայում է Եվրոպական դատարանի ակտի հիմքով ԶԶ սահմանադրական դատարանի որոշումների վերանայման իրավական ընթացակարգ: Բանն այն է, որ եթե նույնիսկ Եվրոպական դատարանը որոշի, որ կոնկրետ գործով կիրառված նորմատիվ իրավական ակտը խախտում է Կոնվենցիայով երաշխավորված իրավունքը, ապա այդ որոշման կատարումը չի ենթադրում, որ ԶԶ սահմանադրական դատարանը պետք է վերանայի այդ ակտի սահմանադրականության վերաբերյալ իր որոշումը: Նման գործերով Եվրոպական դատարանի ակտի կատարումը ենթադրում է, որ Եվրոպական դատարանի ակտը պետք է դիտվի որպես նոր հանգամանք ԶԶ վճռաբեկ դատարանի ակտի վերանայման համար, իսկ եթե Եվրոպական դատարանի ակտով բարձրացվում է համակարգային խնդիր, ապա դրա կատարումը ենթադրում է, որ օրենսդիրը պետք է փոփոխի այն նորմատիվ իրավական ակտը, որը, թեև ԶԶ սահմանադրական դատարանի որոշմամբ համապատասխանում է ԶԶ Սահմանադրությանը,

<sup>21</sup> Եվրոպական դատարանը ներպետական նորմատիվ իրավական ակտը Կոնվենցիային հակասող ճանաչելու իրավասություն չունի, պարզապես իրավունքի սահմանափակումը գնահատելիս, կարող է արձանագրել, որ սահմանափակումն իրավաչափ չէ, քանի որ օրենքն ինքնին իրավական չէ, կամ օրենքով թույլ է տրվել իրավունքի ոչ համաչափ սահմանափակում:

սակայն փաստացի հակասում է Կոնվենցիային: Ուստի, նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումը չի կարող կախվածության մեջ դրվել Եվրոպական դատարանի դիրքորոշումից, քանի որ այս երկու դատական մարմինները լուծում են տարաբնույթ հարցեր:

3. ՀՀ սահմանադրական դատարանի կողմից կուսակցությունների գործունեությունն արգելելը կամ կասեցնելը Կոնվենցիային հակասող ճանաչելու մասին Եվրոպական դատարանի ակտի կատարում: ՀՀ սահմանադրական դատարանն իրավասու է կասեցնել կամ արգելել կուսակցությունների գործունեությունը: Միևնույն ժամանակ, Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածում ամրագրված է հավաքների և միավորման ազատությունը: Եվրոպական դատարանի պրակտիկայում եղել են դեպքեր, երբ այլ պետությունների սահմանադրական դատարանները դադարեցրել են այս կամ այն կուսակցության գործունեությունը, իսկ Եվրոպական դատարանը գտել է, որ նման միջամտությամբ թույլ է տրվել Կոնվենցիայի խախտում: Այս դեպքում հարց է ծագում՝ Եվրոպական դատարանի ակտի կատարումն արդյո՞ք ենթադրում է, որ պետք է վերանայվի ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը: Նախ նշենք, որ խոսքը չի վերաբերում Եվրոպական դատարանի կողմից ՀՀ սահմանադրական դատարանի որոշման վերանայմանը: Օրինակ՝ Սոցիալիստական կուսակցությունն ընդդեմ Թուրքիայի գործով դիմողը վիճարկել է Թուրքիայի սահմանադրական դատարանի որոշումը, որով լուծարվել էր այդ կուսակցությունը և պահանջել էր անվավեր ճանաչել սահմանադրական դատարանի որոշումը: Եվրոպական դատարանն այդ գործով նշել էր, որ նա իրավասու չէ վերացնելու սահմանադրական դատարանի որոշումը<sup>22</sup>: Սակայն անհրաժեշտ է քննարկել, թե նման դեպքերում ինչպես պետք է ապահովվի Եվրոպական դատարանի ակտի կատարումը, արդյո՞ք այն չի ենթադրում կուսակցության գործունեության վերսկսելու հնարավորություն: Կատարման նման միջոցի անհրաժեշտությունը հատկապես կարևորվում է այն դեպքերում, երբ Եվրոպական դատարանը կոնկրետ գործով գտել է, որ թեև իրավունքի միջամտությանը եղել է օրենքով և հետապնդել է իրավաչափ նպատակ, սակայն կուսակցության գործունեության արգելումը, որպես միավորվելու իրավունքի միջամտության իրավական գործիք, անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում: Կարծում ենք՝ այս դեպքում Եվրոպական դատարանի որոշումը պետք է հիմք հանդիսանա սահմանադրական վարույթի նորոգման և ՀՀ սահմանադրական դատարանի որոշման վերանայման համար, քանի որ ՀՀ սահմանադրական դատարանի՝ կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին որոշման գործողության պայմաններում կուսակցության գործունեությունը չի կարող վերսկսվել: Բանն այն է, որ եթե նույնիսկ իրավասու վարչական մարմինները, Եվրոպական դատարանի վճռի հիման վրա, ընդունեն կուսակցության գործունեությունը վերսկսելու մասին համապատասխան վարչական ակտ, ապա այդ ակտը կհակասի ՀՀ սահմանադրական դատարանի՝ կուսակցության գործունեությունն արգելելու մասին չվերցված որոշմանը: Ուստի ՀՀ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով պետք է նախատեսել,

<sup>22</sup> Европейский Суд по правам человека. Избранные решения. М.: Т. 2. С. 506.

որ Եվրոպական դատարանի ակտը հանդիսանում է կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը վերանայելու համար նոր հանգամանք:

ՀՀ օրենսդրությամբ ամրագրված չէ ՀՀ արդարադատության խորհուրդի որոշումները Եվրոպական դատարանի ակտերի հիման վրա վերանայելու և կարգապահական վարույթը նորոգելու հնարավորություն: Բանն այն է, որ ՀՀ դատական օրենսգրքով ուղղակիորեն նախատեսված է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթի նկատմամբ կիրառվում են Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի երաշխիքները: Եթե կարգապահական պատասխանատվության ենթարկված դատավորը ՀՀ արդարադատության խորհրդի որոշումը բողոքարկի Եվրոպական դատարան, և վերջինս հաստատի Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում, ապա ծագելու է Եվրոպական դատարանի ակտի կատարման հարցը: Եվրոպական դատարանի կողմից կարգապահական վարույթի շրջանակներում դատավարական խախտումների փաստի արձանագրումը, կախված խախտման բնույթից, կարող է առաջացնել ՀՀ արդարադատության խորհրդի որոշումը վերանայելու և կարգապահական վարույթը նորոգելու անհրաժեշտություն: Օրինակ՝ եթե դատավարության ընթացքում չի ապահովվել դատավորի՝ փաստաբան ունենալու իրավունքը կամ դատավորին հնարավորություն չի տրվել մրցակցության սկզբունքի շրջանակներում ներկայացնել իրեն մեղսագրվող կարգապահական խախտումը հերքող ապացույցներ: Կարծում ենք՝ Եվրոպական դատարանի նման վճռի կատարումը պահանջում է նորոգել կարգապահական վարույթը, ապահովել դատավարական երաշխիքները, որից հետո կրկին անդրադառնալ դատավորի կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցին:

ՀՀ դատավարական օրենսդրությամբ Եվրոպական դատարանի ակտերը դիտվում են ընդհանուր իրավասության և վարչական դատարանի ակտերը վերանայելու նոր հանգամանք: Այս իմաստով Եվրոպական դատարանի ակտերը, որպես նոր հանգամանք, համարվում են ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքականության վրա ազդելու իրավական խողովակ: ՀՀ օրենսդրությամբ Եվրոպական դատարանի ակտի հիման վրա վերանայվում է միայն կոնկրետ դիմողի վերաբերյալ կայացված դատական ակտը, սակայն կարգավորված չէ համանման իրավախախտման արդյունքում տուժած այլ անձանց վերաբերյալ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման հնարավորությունը: Նման իրավական խողովակի բացակայությունը բացասական է ազդում Եվրոպական դատարանի քաղաքականության արդյունավետության վրա և նեղացնում է այդ քաղաքականության ազդեցության սահմանները: Բանն այն է, որ Եվրոպական դատարանի պրակտիկայում հետևողականորեն զարգանում է, այսպես կոչված, «ուղենիշ (ղեկավար) վճիռների» ինստիտուտը: Վերջինիս էությունը կայանում է նրանում, որ Եվրոպական դատարանը տվյալ պայմանավորվող պետության դեմ ուղղված մի շարք միանման գանգատներից ընտրում է մեկ առավել տիպային օրինակ և ըստ էության քննում և վճիռ է կայացնում միայն այդ գանգատի կապակցությամբ, մնացած գանգատների հեղինակների իրավունքների վերականգնումը կատարվում է ներպետական մակարդակում՝ այդ ուղենիշ վճիռների հիման վրա:

Եվրոպական դատարանի ուղենիշ վճիռների՝ ՀՀ իրավական համակարգ ներմուծելու վերաբերյալ բազմիցս նշվել է ՀՀ սահմանադրական դատարանի կողմից: Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանը 09.09.2008թ. ՍԴՈ-758 որոշման 12 կետում նշել է, որ հաշվի առնելով Եվրոպական դատարանի պրակտիկայում առկա այդ զարգացումները և ելնելով «ուղենիշ վճիռների» հիման վրա ներպետական մակարդակում՝ Եվրոպական դատարան դիմած քաղաքացիների իրավունքների վերականգնման հնարավորությունն ապահովելու անհրաժեշտությունից, ներպետական օրենսդրությունը պետք է այս հանգամանքը նույնպես հստակ ամրագրի: Սակայն ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-758 որոշմամբ արտահայտված ՀՀ սահմանադրական դատարանի իրավական վերոհիշյալ դիրքորոշումները մնացել են անհետևանք: Սահմանադրական դատարանը 13.10.2009թ. ՍԴՈ-833 որոշմամբ կրկին անդրադարձել է նշված հարցին և 11-րդ կետում նշել.

Եվրոպական դատարանի վճռի հիման վրա վերանայման ենթակա պետք է լինեն ոչ միայն կոնկրետ իրավախախտման զոհի վերաբերյալ կայացված ներպետական դատական ակտերը, այլև ներպետական դատական ակտերի վերանայման հնարավորություն պետք է ապահովվի նաև այն անձանց վերաբերյալ գործերով, ովքեր հանդիսանում են նույնաբնույթ իրավախախտման զոհ: ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ ՀՀ Ազգային ժողովի խնդիրն է նախատեսել օրենսդրական կարգավորման այնպիսի միջոցներ, որոնց առկայությամբ կերաշխավորվի ոչ միայն Եվրոպական դատարանի ուղենիշ վճիռների հիման վրա Հայաստանի Հանրապետությունում իրավահամակարգային բնույթի բարեփոխումների իրականացումը, այլև այն անձանց՝ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների դատական կարգով արդյունավետ պաշտպանության ապահովումը, ովքեր Եվրոպական դատարանի կողմից համապատասխան ակտի կայացման պահին (կամ նույն հարցով այլ դիմումների հիման վրա դատաքննությունն սկսելու օրվա դրությամբ) ունեցել են այդ իրավունքը Կոնվենցիայով նախատեսված պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն:

*Այսպիսով կարելի է եզրակացնել.*

1. Եվրոպական դատարանը, տալով Եվրոպական կոնվենցիայի արժեքավոր մեկնաբանություններ և կոչված լինելով ապահովելու այդ փաստաթղթի կենսունակությունը, Հայաստանի իրավական համակարգում ունի խիստ կարևոր դերակատարություն, նրա քաղաքականությունն ընդգրկում է հանրային կյանքի բազմաթիվ ոլորտներ:

2. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով անհրաժեշտ է հստակ կարգավորել Եվրոպական դատարանի ակտերը հայերեն թարգմանելու և հրապարակելու կարգը: Այլ պետությունների մասնակցությամբ կայացված Եվրոպական դատարանի ակտերի թարգմանությունը և հրապարակումը պայմանավորված է ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածով, որը ՀՀ դատարաններին հնարավորություն է տալիս կիրառել ոչ միայն ՀՀ-ի, այլև այլ պետությունների մասնակցությամբ կայացված ակտերը: Այդ ակտերի հրապարակման պարտականությունը կարող է կատարվել փուլային տարբերակով՝ առաջին փուլում Եվրոպական դատարանի Մեծ պալատի կողմից կայացվող ակտերի, իսկ երկրորդ փուլում՝ Եվրո-

պական դատարանի նախադեպային արժեք ունեցող ակտերի հրապարակում:

3. Եվրոպական դատարանի ակտերը ՀՀ օրենսդրությամբ չեն դիտվում ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ արդարադատության խորհրդի որոշումները վերանայելու և վարույթը նորոգելու նոր հանգամանքներ: Մինչդեռ սահմանադրական դատավարության ոլորտում Եվրոպական դատարանի ակտերը կարող են հանդիսանալ ՀՀ սահմանադրական դատարանի ակտերը վերանայելու և վարույթը նորոգելու նոր հանգամանք այն դեպքում, երբ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից կուսակցությունների գործունեության կասեցումը կամ արգելումը կոնկրետ դեպքով խախտել է Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները: Ուստի «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ: ՀՀ դատական օրենսգրքով նույնպես անհրաժեշտ է նախատեսել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթի շրջանակներում Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների խախտման վերաբերյալ Եվրոպական դատարանի ակտի հիման վրա ՀՀ արդարադատության խորհրդի որոշումները վերանայելու և կարգապահական վարույթը նորոգելու իրավական ընթացակարգեր:

**ЕВРОПЕЙСКИЙ СУД ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА КАК ОРГАН,  
ФОРМИРУЮЩИЙ СУДЕБНУЮ ПОЛИТИКУ**

*A. C. Гамбарян*

Статья посвящена Европейскому суду по правам человека. Считается важной роль Европейского суда в деле формирования судебной политики, создания общеевропейской системы правосудия. Многогранно представлена роль Европейского суда в национальной судебной системе, выявлена сущность принятых Европейским судом актов и проблема их опубликования, влияние актов Европейского суда на судебную политику РА.

**THE EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS AS A JUDICIAL  
POLICY MAKING BODY**

*A. S. Ghambaryan*

The article is dedicated to the European Court of Human Rights. It emphasizes the important role of the European Court in the processes of making judicial policies and creating a panEuropean justice system. It gives a comprehensive description of the role of the European Court in the national legal systems, and it reveals the nature of the legal acts adopted by the European Court, the issue of their dissemination, and the impact of the legal acts of the European Court on the judicial policies existing in the Republic of Armenia.